

ԹԱՄԱՐ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

**ԿՈՆՍՏԱՆԴԻՆ ՄԵԼԻՔ-
ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ
(ՏՄԲԼԱԶԻ ԽԱԶԱՆ)
1857-1940**

ԿՅԱՆՔՆ ՈՒ ԳՈՐԾԸ

UNIVERSITY OF MICHIGAN

THE UNIVERSITY OF MICHIGAN

LIBRARY

(SOUTH WEST)

1827-1840

THE UNIVERSITY OF MICHIGAN

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Աշխատությունը նվիրված է XIX դարի վերջի և XX դարի առաջին տասնամյակների հայ մշակույթի աչքի ընկնող գործիչներից մեկի՝ Կոնստանդին Կարապետի Մելիք-Շահնազարյանի (Տմրլաջի խաչան) կյանքին ու գործին:

Կ. Մելիք-Շահնազարյանը ցայսօր հայ գրականության, ինչպես նաև բանագիտության պատմության մեջ չի արժանացել պատշաճ ուշադրության: Նրա վաստակը նշանակալից է և՛ արևելահայ երգիծական գրականության, և՛ ժողովրդագիտության, և՛ մանկավարժության ու մանկագրության, և՛ մասնավորապես մեր հանրային հիշողությունը արթուն պահելու գործում: Կ. Մելիք-Շահնազարյանի ստեղծագործությունը կարևորվում է նկարագրվող և ներկայացվող դեպքերի, իրադարձությունների՝ մեր ժամանակների հետ ունեցած աղերսներով:

Մելիք-Շահնազարյանի գրական-հասարակական, ընդհանրապես, ժողովրդագիտական գործունեության թափանցիկ ուսումնասիրությունը լույս է սփռում XIX դարի 80-90-ական թվականներին արցախահայության հասարակական-քաղաքական, սոցիալ-կենցաղային հարաբերությունների վրա:


Ուսումնասիրության նյութը, անշուշտ, ծավալուն է: Դա ստիպել է մեզ զիտակցաբար խույս տալ որոշ հարցերի մեջ մանրամասն խորանալուց, նեղ պատմագիտական խնդիրների վերլուծությունից՝ հիմնական շեշտը դնելով XIX դարի վերջին քառորդի Արցախ պատմագագրական շրջանի և հատկապես Շուշիի իրական-իրապարակային կյանքի ու Կ. Մելիք-Շահնազարյանի ստեղծագործությունների առնչությունների քննության վրա:

Սույն հետազոտության գլխավոր խնդիրն է հնարավորին չափ ուսումնասիրել, լուսարանել և շրջանառության մեջ դնել արխիվային նյու-

թերում, վավերագրերում, հիշողություններում, ժամանակի պարրերական մամուլում պահպանված տեղեկությունները, որոնք ուղղակիորեն առնչվում են Կ. Մելիք-Շահնազարյանի գործունեությանը: Բացի այդ, հետամուտ ենք եղել նորահայտ նյութերի հիման վրա պատասխանել այն հարցերին, որոնք վերաբերում են տվյալ պատմական ժամանակահատվածում Արցախն ու Շուշին խորհրդանշող «Թոփխանա» իրապարակում արժարժվող թեմաներին:



Աշխատության մեջ ուսումնասիրված հիմնախնդիրների բացահայտման համար հիմք են ծառայել արդի հայ ընդհանրապես, բանասիրության և գրականագիտության մեջ ընդունված տեսական-մեթոդական սկզբունքները:



1905. 1. 26. 1905.

Արևմտահայերէն
Հայոց Հայրենիք.

Բնակչութիւնը Հայաստանի մէջ յայտնաբերուած է որ
կարծազանց քիչ է իրականութեան վրայ հարմար
հարկերու որոշման հարցումը մարտնչական
հարկերու շահուածքով իրարմէն իրար հակադրուած
հարկերու հարկերու, սակայն ուստի իրարմէն իրար հակադրուած

Եւ ինչպէս որ իրականութեան վրայ հարմար
հարկերու որոշման հարցումը մարտնչական
հարկերու շահուածքով իրարմէն իրար հակադրուած
հարկերու հարկերու, սակայն ուստի իրարմէն իրար հակադրուած
հարկերու հարկերու, սակայն ուստի իրարմէն իրար հակադրուած
հարկերու հարկերու, սակայն ուստի իրարմէն իրար հակադրուած

Այս քաղաքական արժեքներու վրայ հարմար
հարկերու որոշման հարցումը մարտնչական
հարկերու շահուածքով իրարմէն իրար հակադրուած
հարկերու հարկերու, սակայն ուստի իրարմէն իրար հակադրուած
հարկերու հարկերու, սակայն ուստի իրարմէն իրար հակադրուած
հարկերու հարկերու, սակայն ուստի իրարմէն իրար հակադրուած

Հետազոտության համար հիմք են ծառայել Կ. Մելիք-Շահնազարյանի Ղարաբաղի բարբառով գրված «Ձուռնա-Տմբլա» Ա, Բ ժողովածուները, հավաքած ժողովրդագիտական նյութերը, թարգմանությունները, ինչպես նաև գյուղատնտեսական բնույթի հոդվածներն ու աշխատությունները:

XIX դ. 80-90-ական թվականներին Արցախ պատմաագագրական շրջանի հասարակական հարաբերությունների քննությունը հիմնականում կատարվել է «Ձուռնա-Տմբլա» ժողովածուներում գետեղված սոցիալ-քաղաքական, ընտանեկան-կենցաղային ֆելիետոնների վերլուծությամբ:

Ուսումնասիրության համար ուղեցույց են ծառայել հայ ժողովրդական րանահյուսության հմուտ հետազոտող ու տեսաբան ակադեմիկոս Ա. Ղանալանյանի «Դրվագներ հայ բանագիտության պատմության» և այլ աշխատությունները, որոնցում ներկայացվում է հայ բանագիտության զարգացման պատմական ուրվագիծը:

Ուսումնասիրվող նյութին առնչվող՝ Արցախի շրջաններից մեկի՝ Վարանդայի պատմական անցյալի ազգագրության ու րանահյուսության մասին հարուստ տեղեկություններ են պահպանվել բազմավաստակ հայագետ Եր. Լալայանի հիմնադրած «Ազգագրական հանդեսի» էջերում:

Ուշագրավ ու արժեքավոր են ականավոր հայագետ, ակադեմիկոս Գ. Ղավանցյանի եզրակացությունները, որոնց նա հանգել է իր հետազոտություններում և բազմավաստակ ազգագրագետ Ատ. Լիսիցյանի՝ քննվող ժամանակահատվածին վերաբերող դիտարկումները «Լեռնային Ղարաբաղի հայերի» մասին: Այս ուսումնասիրություններն արժեքավոր են Արցախին վերաբերող բազմակուրմանի տեղեկությունների առատությամբ, մանրակրկիտ քննությամբ և գիտական վերլուծությամբ: Սեզ հետաքրքրող հարցերի մասին կաբևոր աեղեկություններ է սյարունակում Լեոյի «Պատմություն

Ղարաբաղի Հայոց թեմական. հոգևոր դպրոցի» աշխատությունը:

Ուսումնասիրության ժողովրդագիտական բաժնին վերաբերող արժեքավոր աշխատություններ է հրապարակել վաստակաշատ բանագետ Ա. Հարությունյանը («Անեծքի և օրհնանքի ժանրը հայ բանահյուսության մեջ», «Հայ ժողովրդական հանելուկներ» և այլն): Իսկ բանահավաք Մ.Ս. Գրիգորյան-Սպանդարյանի «Լեռնային Ղարաբաղի բանահյուսությունը» ժողովածուն և Հայ ժողովրդական հեքիաթների գիտական հրատարակության VI հատորը ընդլայնում են հայկական ազգագրական մի խոշոր շրջանի՝ Արցախի բանահյուսության սյուսկերը, որից օգտագործել ենք համեմատության առումով մեզ հետաքրքրող բանահյուսական մուուները:

Աշխատության շարադրանքում օգտվել ենք նաև Աարնե-Թոմվսոնի հեքիաթային տիպերի միջազգային համացույցից, նշանավոր գիտնականներ Վ. Յա. Պրոպի, Դ. Սադովիկովի, Ա Լոսևի և Պ. Լաֆարգի՝ րանագիտության ընագավառին վերաբերող տեսակետներից:

Մեծ է Ն. Թահմիզյանի «Երաժշտությունը հայկական Կիլիկիայում». Ա. Քոչարյանի «Армянская народная музыка» և «Современные народные музыкальные инструменты Армении» (рукопись) աշխատությունների դերը Տմբլաչի խաչանի «Ձուռնա-Տմբլայի» ընտրությունը հայ ժողովրդի երաժշտակատարողական մտածողության յուրահատկությամբ մեկնաբանելու հարցում:

Ընդհանուր և մասնագիտական գրականությունից գատ օգտագործել ենք ձեռագիր աղբյուրներ, հիմնականում՝ Հայաստանի Ե. Չաղենցի անվան գրականության և արվեստի թանգարանի, ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի րանահյուսական արխիվը, Մ. Աաշտոցի անվան Մատենադարանի հատուկ ֆոնդերում պահվող համապատասխան նյութերը և ժամանակի պարբերական մամուլը («Մշակ», «Նորք», «Ազգագրական հանդես», «Աղբյուր», «Տարագ», «Հանդես ամսօրյա», «Նոր-Դար»,

«Սուրհանդակ», «Անկախ մամուլ», «Գրական թերթ») և այլն:

Աշխատության գիտական նորույթն այն է, որ նախ՝ առաջին անհատական ուսումնասիրությունն է՝ նվիրված XIX դ. վերջի և XX դ. առաջին տասնամյակների հայ մշակույթի նշանավոր գործիչ Կ.Կ. Մելիք-Շահնազարյանի կյանքին ու հանրային, գրական, թանագիտական, ժողովրդագիտական գործունեությանը և երկրորդ՝ առաջին անգամ ներկայացվում են Արցախում հայտնի «Թոփխանա» հրապարակում արժանատի թեմաների արտացոլման գեղարվեստական եղանակները, «Զուռնա-Տմրլայի» այլարանությունն ու թարգմանը և վերոհիշյալ գործիքների էթնոմշակութային գործառույթն ու հասարակական դերը:

Նախորդ շրջանում, անվերապահորեն, այս թեմային վերաբերող գիտական հրապարակումներ չկան՝ ռացառությամբ մարգարիտ «Խորհրդային Ղարարող» թերթում Տմրլայի խաչանի մահվան որոշ տարելիցներին նվիրված հիշատակո՞ւմ հոսքի:

Ուսումնասիրության միջոցով գիտական շրջանառության մեջ են դրվում արխիվային նյութեր, վավերագրեր, թանահյուսական նոր ձեռագիր նմուշներ, որոնք անցյալում կամ անտեսվել են, կամ չեն արժանացել պատշաճ ուշադրության: Դրանով էլ պայմանավորված է աշխատության հայագիտական, ժողովրդագիտական արժեքը: Աշխատությունը կարող է օգտակար լինել թանագետներին, մշակութաբաններին, թանասիրական ֆակուլտետում սովորող ուսանողներին:

Աշխատությունը ռադկացած է ներածությունից, չորս գլխից և եզրակացություններից, կցված է ձեռագիր աղբյուրների, օգտագործված գրականության և մամուլի ցանկը, «Զուռնա-Տմրլա» Ա, Բ ժողովածուների թարգմանային թաների ռացատրական թարգմանը, հակորձ՝ Ղարարողի թարգմանի առանձնահատկությունների մասին, աղբյուրների և տեղանունների համառոտագրությունը, Կ. Մելիք-Շահնազարյանի երկերի մատենագիտությունը, Կ. Մելիք-Շահնազարյանի տոհմաճյուղը:

Առաջին գլխում արխիվային վավերագրերի և տպագիր աղբյուրների հիման վրա ուսումնասիրված է ու գնահատված մասնագիտությամբ գյուղատնտես գրողի կյանքն ու մանկավարժական, գյուղատնտեսական, հանրային գործունեությունը, երկրորդ գլխում հանգամանորեն քննված է «Թոփխանա» հրապարակը, որպես արցախահայերի մտավոր ու տնտեսական կյանքի կենտրոն, այնտեղ իշխող հասարակական-քաղաքական հարաբերությունների արտացոլման գեղարվեստական եղանակները, ինչպես նաև Զուռնա-Տմրլա նվագախմբի կենցաղավարված համակարգը: Երրորդ գլխում ռացահայտված է Կ. Մելիք-Շահնազարյանի ստեղծած երգիծական, մանկական ու թարգմանական գրականության գեղարվեստական ու ճանաչողական արժեքը, իսկ չորրորդում՝ նրա ժողովրդագիտական գործունեությունը: